ԳԵՈՐԳ ԲՐՈՒՏՅԱՆ
(Ծննդյան 70-ամյակի առթիվ)

Հայաստանի Հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիայի ակադեմիկոս Գեորգ Աբելի Բրուտյանը հայ ականավոր գիտնականների փայլուն սերնդի ներկայացուցիչներից մեկն է: Նրա ստեղծագործությունները ոչ թե մողայիկ նոոմատպենամոլային «ոյուրիչ ուսումնասիրություններ» են՝ այլ գիտական խորը վերլուծության արդյունք: Անվանի գիտնականի հակումների ու հետաքրքրությունների շրջանակը շատ լայն է՝ փիլիսոփայության տրամաբանություն և տրամաբանության փիլիսոփայություն, փիլիսոփայության փիլիսոփայություն և լեզվի փիլիսոփայություն, փոխակերպական տրամաբանություն և մտածողության փոխակերպումների տրամաբանություն, սեմանտիկա և երկխոսություն, մաթեմատիկական տրամաբանություն և տրամաբանության կապը բնագիտության ու գեղարվեստական գիտակցության հետ, ինչը մարդկային գիտակցության ամենաբարդ ձևն է:

Գ. Բրուտյանը խորությունը է ուսումնասիրում աշխարհի ամբողջականությունը տրամաբանության և իմացաբանության տեսանկյունից, և նրա կշռադատությունները զարմանալիորեն հաջող և հիգրիտ են:

Եվ ինչն է ամենակարևորը: Ակադեմիկոս Գ. Բրուտյանի լայն էրուդիցիայով լուսավորված և օժտված գիտական ստեղծագործությունը միաժամանակ հասցեագրված է ամենատարբեր ընթերցողներին՝ մասնագետներին ու ոչ-մասնագետներին, անկախ պատրաստվածությունից, հետաքրքրություններից ու հակումներից (այստեղ յուրահանչյուրն, անտարակույս, «վերցնում է իրենը», ինչն այդ պահին կամ ընդհանրապես հասու է իրեն ու կարևոր): Բայց դա ամենևին էլ չի նշանակում, թե գիտնականի աշխատությունների կոնցեպցիան հասու է յուրահանչյուրին:

Ի դեպ, պատահմամբ, թե հակառակորդի բերմամբ ինձ բախտ վիճակվեց լինելու Գ. Բրուտյանի՝ փաստարկման փիլիսոփայական և տրամաբանական պրոբլեմներին նվիրված զրքերից մեկի խմբագիրը: Եվ թեև այդ ժամանակ ես կլանված էի այդ զրքով, բայց այնուհանդերձ ստիպված եղա խոստովանել (ինչքան չլինի խմբագիրն էի) նրա յուրահանչյուր բառի մեջ: Եվ ես այդ ժամանակ իսկապես հասկացա, թե հեղինակի համար ինչ է գիտությունը, նրա համար ինչ է բառը, և թե ինչպես են այդ բառի մեջ ապրում մտքի որոնումները ու հույզերի խոովքը:

Ավելի քան հիսուն գիրք և զրույցներ և շուրջ երկու հարյուր հոդված գիտական ճանդեսներում ու ժողովածուներում: Այդ ամենը հրատարակված է տասնյակ լեզուներով, աշխարհի ավելի քան քսան երկրներում, այդ թվում ԱՄՆ-ում, Անգլիայում, Ֆրանսիայում, Ճապոնիայում, Հու-

նաստանում, Բուլղարիայում, Ավստրիայում, Գերմանիայում, Ֆինլանդիայում, Նիդեռլանդներում և այլուր: Նրա աշխատությունները («Տրամաբանության դասընթացը», «Ընդհանուր սեմանտիկայի իմացաբանությունը», «Սեմանտիկյան փիլիսոփայության ճենական վերլուծությունն», «Մաթեմատիկական տրամաբանության փիլիսոփայական ներածությունն», «Դավիթ Անհաղթի ուսմունքը տրամաբանության մասին», «Փոխակերպման տրամաբանությունն», «Փաստարկում», «Իմաստասիրական Երկխոսություններ» (2 հատորով) և այլն, և այլն) գրախոսվել են աշխարհի ամենատարբեր անկյուններում:

Լայն և բազմակողմանի է ակադեմիկոս Գ. Բրուտյանի մանկավարժական գործունեությունը: Լինելով փայլուն մանկավարժ նա 1951 թ. անընդմեջ դասախոսում է Երևանի պետական համալսարանում: Որպես հրավիրված պրոֆեսոր նա դասախոսել է Մոսկվայի պետական համալսարանում, Օմսքորդի, Քեմբրիջի, Լոնդոնի, ինչպես նաև Հարավսլավիայի, ԱՄՆ-ի, Ֆինլանդիայի, Հունգարիայի, Բելգիայի, Արգենտինայի, Բուլղարիայի և այլ երկրների համալսարաններում:

Գ. Բրուտյանի աշխատություններն ուշագրավ արձագանքներ են գտել աշխարհի շատ երկրներում: Մասնաձնելով հայ գիտնականի որոշ աշխատությունների լեզվաբանա-տրամաբանա-փիլիսոփայական բնույթը՝ արտասահմանյան փիլիսոփայության հանրահայտ ոչ քիչ ներկայացուցիչներ անհերկբա դրել են նրա տրամաբանական մտածողության բարձր կուլտուրայի, նրա աշխատությունների լայն ճանաչման, դրանցում ինչպես տրամաբանության, բնագիտության և լեզվաբանության հետ փիլիսոփայության յուրօրինակ զուգակցման, այնպես էլ առկա նոր գաղափարների ու խոր ընդհանրացումների, նրա առաջադրած բազմատրամաբանության (որը գիտական շրջանառության մեջ է դրվել Գ. Բրուտյանի կողմից) կոնցեպցիայի մասին:

Լուրջ գնահատականի է արժանի գիտնականի ակտիվ մասնակցությունը համաշխարհային համաժողովներին և միջազգային կոնֆերանսներին (Իտալիա, Մեքսիկա, Ավստրիա, Կանադա, Անգլիա, Ֆինլանդիա, Գերմանիա, Բելգիա և այլն), որտեղ նա հանդես է եկել զեկուցումներով, ղեկավարել մասնաբաժինների աշխատանքները, վարել «կլոր սեղաններ»:

Ակադեմիկոս Գ. Բրուտյանը համաշխարհային և միջազգային շուրջ երկու տասնյակ ակադեմիաների ու գիտական ընկերակցությունների, այդ թվում՝ Համաշխարհային մշակույթի ակադեմիայի (Անգլիա) անդամ է: Նա ընտրվել է ոչ-ձևական տրամաբանության և ճենադատական մտածողության միջազգային ասոցիացիայի (ԱՄՆ) պատվավոր փոխպրեզիդենտ: Գիտնականը Ռուսաստանի, ԱՄՆ-ի, Բելգիայի, Կանադայի, Նիդեռլանդների և այլ երկրների տասներկու միջազգային գիտական հանդեսների ու պարբերականների խմբագրակազմերի անդամ է:

Փիլիսոփայական գիտության մեջ Գ. Բրուտյանը կանգնած է մի շարք գիտական դպրոցների և ուղղությունների ակունքներում: Նա «Փոխակերպական տրամաբանություն» ուղղության հիմնադիրն է, հիմնել է Փաստարկման Երևանյան դպրոցը, մշակել բարդմանչական արվեստի տրամաբանական հիմունքները: Գոյություն ունի գիտական սկզբունք, որը համաշխարհային փիլիսոփայական և լեզվաբանական գրականության մեջ հայտնի է որպես «Բրուտյանի լեզվաբանական լրացուցչության սկզբունք» (այդ մասին մասնավորապես գրել է հանրահայտ լեզվաբան Վ. Զվեգինցևը, խոստովանելով, որ իր գրքերից մեկի շարադրանքը հենված է Գ. Բրուտյանի եզրակացությունների վրա):

Եվ այս ամենի հետ միասին, լինելով ամբողջությամբ գիտությանը նվիրված անձնավորություն, ակադեմիկոս Գ. Բրուտյանը հայրենանվեր քաղաքացի է բառիս ամենաիսկական իմաստով: Ահա միայն մեկ, բայց միանգամայն պերճախոս փաստ նրա հայրենանվեր գործունեությունից: 1967 թ. Լոնդոնի հանրահայտ «Սորբի» կազմակերպությունը հայտարարում է Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց Եկեղեցու ձեռագրատնից գողացված 23 հայկական ձեռագրերի անհայտի մասին: Այդ օրերին դասախոսությունների նպատակով գտնվելով Օմսքորդում, Գ. Բրուտյանը, մոռանալով ամեն ինչ, իրեն բարեկամաբար տրամադրված և հայերի ազգային դրամայի ամբողջ խորությունն ընկալող գիտության ու մշակույթի անգլիացի գործիչների հետ համատեղ միջամտում է այդ իրադարձությանը և իր դերը խաղում անհայտը դադարեցնելու, այդ ձեռագրերը փրկելու և Երուսաղեմ վերադարձնելու գործում:

Գ. Բրուտյանի գիտական գործունեության մեջ հատուկ տեղ են գրավում հայագիտության գծով հետազոտությունները: Դրանք վերաբերում են Դավիթ Անհաղթի, Անտոն Գարագաշյանի տրամաբանական ուսմունքների, տրամաբանա-փիլիսոփայական տեսանկյունից Սայաթ-Նովայի, Դանիել Վարուժանի, Եղիշե Չարենցի և հայ մշակույթի այլ ներկայացուցիչների ստեղծագործությունների ուսումնասիրմանը: Նրա հետազոտությունները ընդգրկել են հայ փիլիսոփա-

ության և տրամաբանության պատմության, հայոց լեզվի արդի վիճակի և նրա տրամաբանական տեսանկյունների հարցերը, հայագիտությանը հարակից այլ հիմնախնդիրներ: Նշանակալից է ակադեմիկոս Գ. Բրուտյանի ներդրումը ժամանակակից հայ փիլիսոփայական դպրոցի զոյավորման գործում: Անհրաժեշտ է ընդգծել այն կարևոր ավանդը, որ Գ. Բրուտյանն ունի հայերենով ժամանակակից տրամաբանության տերմինաբանության մշակման ասպարեզում:

Խիստ արդյունավետ է եղել ակադեմիկոս Գ. Բրուտյանի գիտակազմակերպական գործունեությունը: 1987 թ. նա հիմնել է Հայոց փիլիսոփայական ակադեմիան՝ դառնալով նրա պրեզիդենտը:

Երևանի համալսարանում Գ. Բրուտյանը ակտիվ մասնակցություն է ունեցել փիլիսոփայության և տրամաբանության ամբիոնի և փիլիսոփայության ֆակուլտետի հիմնադրման գործին:

1977—1994 թթ. Գ. Բրուտյանը եղել է Հայաստանի Գիտությունների Ազգային Ակադեմիայի փիլիսոփայության և բանասիրության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարը, իսկ 1994 թ.՝ ընտրվել ՀՀ ԳԱԱ փոխպրեզիդենտ: Գ. Բրուտյանի տասնյակ աշակերտներ պաշտպանել են ատենախոսություններ: Նրանց մեջ չի կարելի չառանձնացնել մեր դարաշրջանի խոշորագույն շախմատիստ, աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյանին: Հայ վաստակաշատ գիտնականը պարգևատրվել է մի շարք երկրների (Ռուսաստան, ԱՄՆ, Անգլիա, Չեխոսլովակիա) տարբեր գիտական կազմակերպությունների բազմաթիվ մեդալներով: Դեռևս Աբելի Բրուտյանին ցանկանում եմ երջանկություն, ստեղծագործական նոր հաջողություններ:

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ա. Պ. ԳՐԻԳՈՐՅԱՆ